

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չին տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՃԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՍԵՊՏ. 16 ՇՊԵՍՏ. 1900

ԹԻԻ 179

ԱՆԵԾՔԷ ՎԱՍՆԱՆՔ



Պատասխանատուութեան ծանրութիւնը՝ զոր կտեսնուի մեր բոլոր հանրային գործերու անկերպարան վիճակը, չիյնար միմիայն մէկ դասակարգի վրայ. ամեն շրջանակ իր բաժինն ունի այն համեմատութեամբ ինչով որ անկախ բոլոր գործիք մը ունենալը կարծէ ընկե շրջան մէջ:

Ժամկոչէն մինչև կաթողիկոսը, խրատախիւրն իր իշխանութեան չափովը աստիճանաբար թեթեւ կամ ծանր պատասխանատուութեամբ բեռնաւորուած են այն ամեն զեղծումներու առթիւ, որ կը պատահին մեր եկեղեցիին մէջ ու ժողովուրդը զգուանքով կը հեռացնեն անկէ:

Տնտեսէն մինչև թագապետ ազանները, մէջտեղ առնելով վարժապետներն ու հոգաբարձուները, ամենքն ալ իրենց բաժինն ունին այն հսկայ գործին մէջ, որով կը շինեն ապագայ հայութեան միտքը, եթէ երբեք քանգելն ալ չինել ըսել է:

Վերջապէս բեռնակիրէն սկսեալ մինչև միլիոններու մէջ գլտորակուող հայը պատասխանատու են այն բոլոր տխուր երեւոյթներուն համար, որոնք կը կասեցնեն մեր տոհմային յառաջդիմութիւնը և տեղի կուտան շատ մեծագոյն աղետներու:

Այս, մանաւանդ սա հարուստ դասակարգը, ինչեք չը կրնար ընել ու չընեն. Եթէ ինչպէս կը տեսնենք, որքին արցունքներն է, որ կապարէ գնդակներու պէս կը ծակեն մեր սիրտը, անկա կարող է սրբել այդ արցունքները և ճշմարիտ հաճոյքով մը հրճուիլ: Եթէ խաչադոյն է որ աղբին ճակատագրովը կը խաղայ, անկա կարող է գործնական գերով մը կտակցունել խաչագողին այդ թռիչները և հայ յեղափոխութեան

բռնաթիժը բարձրացունել, որ միակ միջոցն է ազգին փրկութեանը: Եթէ հայ մանկաին է որ կը զոհուի և հայ վարժարանն է որ շահաստանը կը դառնայ խել մը թերի դատարանութեամբ փթացած ուղեղներու, անկա կարող է Բրիտանի խարազանովը մաքրել և հայ մտքին բարեշրջումին սատարը հանգիստնալ խկապէս:

Բայց ո՞ր մեր հարուստները, ո՞ր այս կարգի բարեգործական մտածումները: Անոնք կիրքերու խօլ թափով մը նետուած են այլուր, հեշտանքներու աշխարհը, ուր եսէ զատ ուրիշ բանի վրայ չը մտածուիր և ուր արեւելքի տոհմիկ աղնութեան վրայ արեւմուտքի շուայտութեանց յաղթանակը կը ծափուի խելայեղ մրցումով մը: (*)

Հոն այդ աշխարհի մէջ խաղի սեղանն է որ կարեւոր տեղ մը կը գրաւէ: Եթէ չէ ողբալի, շատ նկարագրել է տեսնել ջղաճգական կծկումները, դէմքի ծամածռութիւնները և գալարումները, որ հայ լայթին դէմքը կը գունաւորեն այդ սեղանին շուրջ խաղին ստացած երեւոյթներուն համեմատ: Հողեկան անհատնեւ կուի մըն է որ կը մղէ ինքը սպառնելով և սպառնցնելով, և այս բնդհանուր սպառնումին է որ «հաճոյք» անունը կուտայ ան:

Ի զո՞ւր կը մատչիս իրեն ու դողդալով կըսես. «Աղա, Հայաստանի մէջ որբերը անօթի կը մեռնին կոր, սուտ յեղափոխականները մեր տունը քանդեն կոր, վարժապետները մեր մանուկները կ'սպաննեն կոր, կ'աղաչեմ, օգնութեան հասէք»:

«Աս անօթին ի՞նչ կը տրտռայ», ահա բոլոր պատասխանը այն ամեն պաղատանքներուն, զոր կը

(*) Մեր Տիար աշխատակիցը անշուշտ կը ճանչնայ յարգելի բացառութեան մը գոյութիւնը, որուն կը պարտինք շատ մը բարեգործական հաստատութիւններ թէ Պոլսոյ և թէ գաւառներուն մէջ:

Ծ. Խմբ.

ներկայեա իրեն յանուն բաղձաշարչար ազգին, որուն կը պատկանի ինքն ալ, իր սերունդն ալ: Խաղին սեղանին մօտ դրուած է նաև հեշտօրօր մահիճը, ուր պարկեշտութիւնը կը բռնաբարուի այնքան անպատկառ, որ զանց կընեն մանրամասնել ընթերցողացս ականջները խնայելու համար:

Եւ ահա այս կրկնակ մոլութիւնն է որ խրամատներ կը բանայ մեր հարուստ գաղափարդին և մեր հանրային գործերու միջև: Սուտ և յիմարական է այն տրամաբանութիւն, որով մեր հարուստներէ ոմանք ինքզինքնին արգարացնել կ'ուզեն, առարկելով թէ՛ ազգին վշտացած են իրենք, իբրև թէ ազգը իրենց և իրենք ազգին չը պատկանէին: Իրական յաւը՝ իսկի կանանց սեղանը և հեշտանքի մահիճն է, որոց ցանցերէն բռնուած, չեն կարող իրենց ուշադրութիւնը դարձնել դէպի հէգ ժողովուրդը որ կը տառապի, ի հարկէ անէծքներ կարգալով այդ կարգի հարուստներուն:

Եւ անէծքը որ կը թռի ժողովուրդի մը բերնէն, անարշիթի գնդակէն աւելի է... Գիտնանք:

ԾԱՆՕԹ

ՄԵԳԻՍԻՔԵ

— Նպաստից յանձնաժողովը որոշեց Տիվրիկի մէջ առ այժմ աասը թեզկենահ հաստատել, տարազագործութեան արհեստը տարածելով տեղացւոց կարօտ մասին ապրուստ հայթայթելու համար:

— Սուլթանը Քարակէօմըիւի հրէշքէնց համար 1000 ոսկի նուիրած է: Բաղաքապետութիւնն ալ հրաման ստացած է ընդ փոխ պատրաստել շինուելիք շէնքերուն յատակագիծերը:

— Սէմֆէրոբոլի (Ռուսիա) ազգայիններէն Պ. Աթանաս Օդոսենտեան՝ որ մէկ միլիօն ռուպլի հարըստութեան տէր է, 50,000 ռուպլի նուիրէր է քաղքին աղքատ հայերուն բնակարաններ շինելու համար:

— Նուպար բաշայի մահարձանը որ Բարիզի մէջ կը պատրաստուէր, աւարտած ըլլալով եգիպտոս ղրկուեր է: Մահարձանը կը կրէ սա պարզ արձանագրութիւնը, «Նուպար Բաշա»:

— Յաւաշիկայ երկուշաբթի, Խաչի մեռելոցի օրը տեղւոյս Ս. Սարգիս եկեղեցիին մէջ հանգիստոր պատարագ և հոգեհանգստեան պստոն պիտի կատարուի որբախնամ բարեյշատալ Գ. Ջանշեանցի հոգւոյն համար:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— 2005 —

ՖԻԼԻՊԷԻ ՈՐԲԱԽՆԱՄԸ

... Խմբագիր

Անցեալ 1899 Սեպտեմբրին հաստատուած Ֆիլիպէի Որբախնամ ընկերութեան գործառնութեանցը վրայ տարիէ մը ի վեր բան մը իմացուած չըլլալով, իբր ազգային մի անհատ կուգամ ներկայիւս խոնարհաբար հարցնել թէ՛ ի ձայն փողոյ և սրնդի կազմեալ այդ որբախնամը ի՞նչ կընէ, ու մինչև ցարդ ի՞նչ հաւաքած եւ հաւաքածը ի՞նչ ըրած է:

Հաւատարի ըլլալով որ այդ բարենպատակ ընկերութիւնը պէտք եղած բացատրութիւնը տալով մեզ նման շատերու հետաքրքրութիւնը պիտի յագեցնէ:

Մեամ յարգանք
ԿՈՐԻԻՆ

Տեղւոյս եկեղեցւոյ դաւթին մէջ ալ կը կարգացուի հետեւեալ ազգը:

ԱՁԴ

Թաղ. Խորհուրդս՝ եկեղեցւոյ բարեկարգութեան խանգարմանը տեղի չտալու համար կը հրահրէ բարեպաշտուհի տիկինները որ փոխանակ պահարաններու իրենց յատկացեալ վերնատան և դաւիթին երկու կողմերը կանգնին:

ԿՆԻՔ

(Ասանկ տնօրէնութեան մը շատոնց կը պատուէր):

Վառնայի Աղջկանց Կրթարանը փոխադրուած է Սաղալլը շէշմէ, հին գաղարնային դէմը, թիւ 1115:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Թաղական խորհուրդս նկատելով որ կարգ մը ազգայնոց կողմէ կազմուած մէկ քանի ընկերութիւններ ըստ օրինի վաւերացուած չեն ազգային պաշտօնական մարմինէն, ուստի ներկայիս կազդարարէ անոնց որ իրենց կանոնագրութիւնները վաւերացնելու համար փութան մինչեւ յասանիկայ Հոկտեմբեր 1 ներկայանալ Թաղ խորհրդարան: Հակառակ պարագային խորհուրդս պիտի պարտաւորի այդ ընկերութեանց ամեն գործառնութիւնները դադրեցնելու համար պէտք եղած օրինական միջոցներուն գործի:

Ի գիմաց Թաղ • խորհրդոյ

Ատենադպիր

Ատենապետ

Ս • ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

Յ • Մ • ԹՈՎՄԱՍԵԱՆ

Սօփիայէն Իդիա Գալփանեան և Աբրահամ Մուրատեան ստորագրութեամբ խմբագրութեանս զրկուած նամակ մը կը յայտարարէ թէ, ծանօթ կրկնամուսնութեան լուրը իրենք չեն տուած Տ. Կարապետ քահանային ու ժամկոչին, ընդհակառակը իրենք ալ անոնցմէ իմացած են: Արդէն մեր թղթակից Պ. Սլաք ալ իր պատասխանին մէջ ըսած էր թէ ինքը քահանայէն ու ժամկոչէն իմացած է և այս վերջիններն ալ (ըստ իրենց խոստովանութեան) վերոյիշեալ նամակագիր երկու անձերէն լսած են եղբւ: Ամեն պարագայի մէջ մեր թղթակիցը մեղադրելի չէ, քանի որ այդ լուրը իրեն տուողը պարզ անհատ մը չէր, այլ քահանայ մը՝ որուն ճշմարտախօսութեանը վստահելով՝ կատարած է իւր թղթակցի պարտականութիւնը:

ՉԻՐՔԻՆ ՀԱԼԼԵՐ

Թարափըմըզա կէօնտէրիլէն այնէն վարագա տըր:

Միւլէլիֆ.

Չարըմըզտա պուլընան պիր գաչ տիւքեանեճըլար՝ տիւքեանլարընա կէլէն քէօյլիւ սափտէրուն միւլթէրիլէրէ մալ պէյէնտիրէմէյիպ վէ եա բազարլըգլարը ույմազսա՝ «նիլին պէյէնմէյօրսըն, նիլին իսթէտիլիմ ֆիյաթը վէրմէյօրսըն» տէյուպ անլէրէ գարշու պիր թագըմ քիւֆր ու հա-

բարէթ իթմէքուէ վէ չարըմըզ տիւքեանեճըլագընըն նէֆրէթիլնէ մուճիպ օլմագտա տըրլար: Պուսլարըն պէօյլէ նապէճա հալլէրիտէն պիր չօգ միւլթէրիլէն «ամա՛ն, պիր տահա շու չարըմա կէլմէյէլիմ» տէյուպ ալըպ եիւրիւրյօրլար: Ախաղուրթա իլէ մէշղու պուլընան պիր տիւքեանեճը պու կիպի հալլէրտէ պուլընմալը մը տըր: Շիմտի, արատա պիր Պ. Բոժոժիկի պու թարափլարա կէօնտէրիպ, պալատէ սէօյլէտիքլէրիմիզի պիթթաստիք՝ միւճիպիլնէ հարաքէթ իթմէնիզ միւսթէրճա տըր, էֆէնտիմ:

8 Սեպ. 1900

Վառնա Պալթաճը չարըմը:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ (ԱժԱՆԱ ԲՈՇՈՇԻԿ ԵՆ ԸՆԿ)

Բարիկ

Առաջնակարգ յեղափոխական մը լքանելով իր կիներն ու զաւակները, իր քեռիին աղջկանը հետ սիրահարուած՝ զայն առածին պէս փախաւ դէպի Պէլճիզա:

Բոժ. — Պօմպ...


Վաշինկիթոն

Մէկ քանի խաչագողեր ընկերական ժողովքի մը մէջ առաջարկեցին ի նպատակ Օ. գործին հանգանակութեան ձեռնարկել: ու անմիջապէս պնակ մը առած իրենք նախապէս սկսան մէյմէկ ֆրանք տալ: Ասոնց մանօվրային իրադեկ անձ մը ոտք ելած հետեւեալը յայտարարեց. «Ժողովուրդ, մի՛ խաբուիք. այս պարոնները ձեր քիթէն բռնելու համար մէյմէկ բան կուտան. երբ դուք ալ մասնակցիք ու պնակը լեցնէք, իրենց տուածը ետ պիտի առնեն ու ձեր տուածն ալ մէջերէն բաժնեն»: Այս յայտարարութեան վերայ խաչագողաց ճիւղերը թրս ըրաւ:

ԼՈՅՍ ՏԵԱՒԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Գ. Հասոր նոր Ընթերցարանը

Ա. տարի գին 60 սանդիմ, Բ. տարի գին 1 ֆր. Գ. տարի գին 1 ֆրանք: Դիմել յօրինողին սահմանցէով, Յ. Կ. Պօնճուքեան Վառնա քսան օրինակ գնողին համար 15 0 | 0 ղեղէ:



ՌԻՄՊԵՐԹՕ Ա. ԹԱԳԱՆՈՐ ԻՏԱԼԻՈՅ. (56 տարեկան).
որ Մոնցայի մէջ անիշխանականի մը կողմէ սպաննուեցաւ.
1900 Յուլիս 17ին:

ԻՏԻՍԸՆԻ ՄԷԿ ԿՈՐ ԳԻՒՏԸ

Տիեզերահաշակ Էտիսըն կը ծանուցանէ թէ աւարտած է շինութիւնը մեքենայի մը, որով ուղղակի ամուսնէն ելեկտրականութիւն առաջ պիտի բերէ առանց ճիւղաւոր գործածելու: Կը յայտարարէ թէ իր գիւտը գործնականապէս պիտի վտարէ շողին և կարելի պիտի ըլլայ նիւ Եորքէն Լիվրքուլ հասնիլ չորս օրէն՝ նաեւ բայնցներով ելեկտրականութեամբ, առանց շողի: Կըսուի նաեւ թէ շատ քիչ ծախքով կարելի պիտի ըլլայ տուներու մէջ ունենալ ելեկտրական լապտերներ:

* *

Աշխարհի շրջանը 30 օրուան մէջ. — Ռուսիոյ հասարակաց շինութեան պաշտօնարանին կողմէ արուած հաշուի մը նույնիսկ, երբ 1901ին Սիպերիոյ մէջէն անցած երկաթուղիի մեծ գծին շինութիւնը աւարտի, մարդ մը 30 օրուան մէջ կարող պիտի ըլլայ ամբողջ աշխարհիս շրջանը կատարել: Այս հաշուոյն նայելով, մէկը Գերմանիոյ Պրէմ քաղաքէն մինչև Բեդերսլուրի 1 1/2 օր, և Բեդերսլուրիէն, Սիպերիոյ արեւելեան ծովեզերքը գլուխուած Վլատիվոստոքի նաւահանգիստն երկաթուղիով 10, Վլատիվոստոքէն մինչև Ամերիկայի արեւմտեան ծովեզերքը, Յան Ֆրանչիսքօ քաղաքը, շողենաւով 10 օր, և այս վերջին քաղաքէն մինչև Նիւ Եորք 4 ուկէս օր երկաթուղիով, և ապէսց ալ Թրանսսիանիայի գծով՝ շողենաւով, մինչև Պրէմ 7 օր երթալով, ամբողջ աշխարհիս շրջանը 33 օրուան մէջ կարող պիտի ըլլայ կատարել: Այս հաշուոյն մէջ Սիպերիոյ երկաթուղ-

ւոյն արագութիւնը ժամը 48 քիլոմետր ենթադրուած է. սակայն քիչ յետոյ երբ գիծերը կամրանան և արագութեամբութիւնը կը շատնայ, այն ատեն կարելի պիտի ըլլայ ամբողջ աշխարհիս շրջանը 30 օրուան մէջ կատարել:

ՍԱԼՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐ. Գ.

(Տիկին Սիւզեան.— 50—55 տարեկան, մարմնով պղծտիկ և գէր բայց տակաւին շիբ և պշրով կնոջ մը շարժումներով: Լուրդէնք փայլուն կեանքաշիններ. մով ծագիկներով մետաքսէ կոշիկ շրջադեհատ, պօս մը վիզը եւ գեղին վարդ մը տանթէլաշարդ կուրծքին վրայ:

Օրիորդ Սիւզեան.— 20—25 տարեկան, աղւոր աչքերով, մօրը պէս հրապուրիչ և այնքան փափուկ որ կարծես կզգինքրու ծաղիկ մըն է...

Նատիրեան.— 35ի մօտ, ցանցաւ մօրուք, պղտիկ աչքեր, նոր ձեռնոցներ. գործ չունի. մօրը ստակը կը վառնէ: Հոկտեմբերի վերջին կիրակի մը, կէս օրէն երկու ժամ վերջ: Խոնաւ ցուրտ օդ մը: Տիկին եւ Օրիորդ Սիւզեան այցելութիւններու կսպասին: Տիկինը թիկնաթոռի մը մէջ ընկալման, վառարանին բով, կը մտաւ, խօսելէ յոգնած, իսկ Օրիորդը, պատշգամին մէջ, օրաթերթի մը թերթինը կը կարգայ, մերթ ընդ մերթ փողոց նայելով: Յանկարծ զանգակին ձայնը որ այցելու մը կը ծանուցանէ. Տիկին Սիւզեան կարմնայնաւ և Օրիորդը մէկ կողմ կը ձգէ օրաթերթը: Մէկ բանի վայրկեան վերջ, սենեկէն ներս կը մտնէ Նատիրեան:)

Նատ.— (խոհարհեռոյ) Տիկին... Օրիորդ...

Տիկ.— Օ... մօսիէս Նատիրեան. հրամայեցէք... բարի եկաք. այս օր հովը փչեց. սանկ հրամայեցէք կաշաշեմ...

Նատ.— (ժպտում) Մեռսի...

(Կը նստի. խոնարհութիւն, ժպիտ. կրկին խոնարհութիւն եւ ժպիտ: Տիկին Սիւզեան սիկառէթ մը կը հըրամցնէ, հատ մըն ալ իր բերանը դնելով:)

Տիկ.— Ի՞նչպէս էք ի՞նչպէս են տունէն. ի՞նչ տխուր օդ այսօր կարծէք թէ անձրեւէ պիտի.

Նատ.— Այո, շատ է էջ. տիկին.

Օր.— Պառմէզը անձրեւ կը ցուցնէ կոր.

Տիկ.— Այո. բայց ես չիտեմ. շատ կը մսիմ կոր այսօր. (խորեւ թէ կը դողդողայ).

Նատ.— Այո, շատ ցուրտ է. վիեննա ձիւն է եկեր. փետուրեան Տիրանը կը պատմէր կոր երէկ.

Տիկ.— Գիտեմ. մեզի էր առջի օր. իր վիեննա ձիւնը դառնալը պատմեց. թռէնը չեմ գիտէր ուր կեցեր է եղեր.

Օր.—Թող թռէն օրէսիալով վերադառնար. բաւական քաշկրտեցի զինքը.

Նառ.—Շատ ազէկ ըրիք. Օրիորդ. այնպէս կը խօսի որ կարծէք թէ Պառնաթօյին տղան է.

Տկն.—(խնդարոյ) Այլ պարծենալ մը որ.

Օր.—(հեզկոտ) Ինչի՞նչ, չիտեմ.

Նառ.—Երէկ գիշեր Շանթօղներու հետ Սելանտիտը կը ճաշէր կոր.

Տկն.—Վայ. մինչև հոտ տեղուանքը ելե՞ր է.

Նառ.—Ինչո՞ւ չէ. Տիկին. ինքզինքը վիէննա կը կարծէ կոր. ես կը զարմանամ թէ ինչպէ՞ս ալ կըրցաւ Եւրոպայ երթալ.

Տկն.—Գիտէք ինչու. կնոջ մը համար ամէն բան կընէ մարդ. բայց իմ իմացածս պարաք ըրեր դացեր է. արդէն հօրը քով բարա մը չմնաց.

Նառ.—Ձաթը ինչ ունէր որ. Տիկին, չտես մարդուն մէկը. ես անոր եամալը կօշիկ հագնելը գիտեմ.

(Կը խնդան, յետոյ պղտիկ լոռութիւն մը օրու միջոցին Տիկին Սիւզէեան սիկառէթ մ'առլ վառած եւ տեղաւորուած է թիկնաթոսին մէջ.)

Տկն.—(խնդար շարունակելոյ) Ասանկ բանե՛ր է. դեռ ինչպէ՞ս էք տեսնենք. կերակայ թէ Բրինգիբօէն դառնալնուս կսպասէիք մեզի գալու համար. շիտակը բէք կիւճս դացած է.

Նառ.—Իրաւ որ Տիկին, այս ամառ Պէօյլքտէրէէն դուրս չելայ. տեղ մը չի դացի.

Օր.—(ընդմիջելոյ) Հարկաւ. բոքերը ողջ ըլլայ.

Տկն.—Օհ, ըսելդ աւելորդ է. աղջիկս.

Նառ.—Ընդհակառակը. մարդ չիկար խաղալու. մինակ խոսրովեանները կային. . . անո՞նք ալ.

Տկն.—Գիտե՛մ. երբեք օրի չափ ալ իրինգիբօ Փետուրեաններուն էին. քիթերնուն բերններնուն եկաւ. խեղճ աղջիկը կը մեռնէր կոր քիչ մնաց.

Նառ.— . . . ?

Տկն.—Մաշալլա. Տիկին Փետուրեանը երկու օր իրարու վրայ մայօնէզ կերցուցեր է խեղճերուն.

Օր.—Գիտէք եւ. վերջապէս. Գաղղիացի խոհարարին մայօնէզը. . . (Կը խնդան երկարօրէն)

Տկն.—Է՛ է՛ է՛ է՛. . . Նատիրեան էֆէնտի պատմեցէք նայինք. իմացաք եւ Տիկին Սելանտանին խնդիրը. ճանրմ. այդ կնիկէն հիշ չէի յուսար շիտակը.

Օր.—Ի՛նչ խայտառակութիւն.

Նառ.—Իրաւ է տեսնենք. Տիկին. շիտակը ես.

Տկն.—(ընդմիջելոյ) Ձէք հաւատար. ըսել է որ օ գուրան չէ՛ք. թողէք որ պատմեմ ձեզի.

Օր.—Մամա՛.

Տկն.—Ձգէ՛, աղջիկս. ի՛նչ քնառ ունի. Նատիրեան էֆէնտին օտար չէ՛.

Նառ.— . . . ? (Կը խոնարհի)

Տկն.—Շիտակը ես ալ չուզեցի հաւատալ առջի բերան. բայց վերջապէս. սուտ ալ չի կրնար ըլ՛

լալ. ամէն մարդ տեսեր է որ Տիկին Սելանտանը Սալէմեանին հետ. . .

Նառ.—(հետաքրքրուած) Բայց իրաւ կըսէք. Տիկին. ի՛նչ գայթակղութիւն.

Տկն.—Մորկ ըրէք. կաղաչեմ. ըսածս չըլլալիք բան մը չէ՛. օրինակները լեցուն են. միայն թէ Տիկին Սելանտանը շատ բացէն դործ տեսաւ. . . կառքով Սալէմեանին հետ մինակ մինչև Մասլախ գացեր է. գոնէ բան մը պիտի ընէրնէ՛, վայնիվրան, գաղտնի թող ընէր.

Նառ.—Ճիշդ է. Սան-ժէն կնիկ մըն է արդէն.

Տկն.—Պապօ՛. աղէկ ըսիք. բայց զարմանալին ան է որ ժամը գիշերուան երկուքին տուն կը վերադառնան.

Նառ.—Օհ. . .

Օր.—Այո՛.

Տկն.—Գէշը հոտ է եւ. գոնէ կանախ ըլլար. չէ, ժամը ճիշտ երկուքին. խեղճ էրիկը ամբողջ երեք ժամ Բերայի մէջ կը պտտի, կը փնտռէ եւ երբոր տուն կուգայ ճարահատած յոգնած, կինը դաշնակին առջև. Կռան վիան կը զարնէ կոր եղեր. հա՛, հա՛, հա՛, հա՛ (կը խնդայ):

Օր.—Մեծ թուբէ է շիտակը. (կը խնդայ):

Նառ.—Ձարմանալի բան. (կը ժպտի):

Տկն.—(Շարունակելոյ) Կերակայէք անշուշտ խեղճ էրկանը վիճակը. բայց կնիկը կը խնդայ, կը համոզէ, էրկանը ճիշտ կը պլլուի ըսելով թէ. գիտէ՞ք ինչ. օհ, դարչելի բան է. ըսելով թէ վերջապէս շատ մը բաներ. օհ, դարչելի բան է. տգեղ բան է.

Նատիրեան.—(մէկ ձայնի վրայ) Սոսկալի բան է. տգեղ բան. տգ. . .

(Նոյն միջոցին դռնփակի երկրորդ ձայն մը. Տկն. Սիւզէեան կ'ընդմիջէ խօսքը. հանդարտած, ժպտուն, սանդուղներուն վրայ եկող հիւրին ոտքի ձայնը կը լսուի. Նատիրեան ոտքի կենէ):

Տկն.—(յուրջ) Ի՛նչ, կը մեկնի՞ք.

Նառ.—Այո՛, տիկին, շատ նստայ արդէն. ինծի հրաման.

Տկն.—Շատ աղէկ. Օրվուա՛ւ. նորէն հրամմեցէք. անթըր նու. հէ՛.

Նառ.—(խոնարհելոյ) Հարկաւ. քնաք բարով Տիկին. . . Օրիորդ. . . (Եւ կը մեկնի) S O U P

ՁՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր, մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էսպան, Քատրաթ, Էնթերլիներ, Գիծ եւ Կարնիւթիւր:

Գիները յոյժ գիւրամատչելի: Հասցէ

AGOP DZÉROUNIAN SOPHIA (BULGARIE)

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

Դ Ո Ւ Ն

Հորիկ պես դուն երեւցար իմ աչիկն,
Արեւ բացիր սրտիս մէջը խառափն.
Յարկշակուած, սուրբ տոյսանփով տգորուն՝
Դերիդ դարձայ՝ հրշոյ շունի մը հանգոյն:

Սեզ փառածքդ, քիչքդ մարմար, շրթերդ նոռ,
Վառփստ այսերդ, յոնփերդ կամար, աչերդ հոր.
Արծարծեցին հոգւոյս խորը սերն թափուն,
Ու ես, հիմա, սիրով արքշիռ մեմ անփուն:

Ինծի պէտք չէ՝ անդրաշխարհի այն չրփնադ,
Ուր պիտի իշխեն հեշտանփ, վայելք ու ծիծաղ.
Ես սերդ կողքեմ, խենդեցընող, կենսաւես,
Այս, ըստուկդ եմ, սիրոյդ մորիկն առ յաւես:

Սիւրսորէ
10 ՅԵՄ. 1900

ԾՈԹՈՐ



Հայր եւ տղայ

Հայրիկ, սա գիմացի պագալնիցան «չէյիր-
տէքսիզ իւզիւմ» կը պողայ կոք. հիշ կուտսուզ
ալ խառլ կըլլայ:

— Կըլլայ, հապա՞... կուտսուզ մարդ կըլ-
լայ կոր տէ ինչո՞ւ խառլը կուտսուզ չըլլայ:

Ի՞նչ անպապար

— Պէն սէնին եէրինսէ օլսամ, վագըթ կէ-
չիւմէյէրէք էօյլէ էվլատը հէմէն էվլէնտիրի-
րիւմ:

— Էյի սէօյլէյօրսուն ամա՛ տահա օն սէ-
քիզ եաշընտա տըր. պիր ազ ազլը պաշընա
կէլսին քի...

— Ազլը պաշընա մը կէլսին... օ վագըթ
հիշ էվլէնմէյէք տիր:

— Միւսիւ տօքթօռ. հիշ տուէլլօ իթմիշմի-
սինիզ.

— Պէնտէնիշ մի. ա՛լա. պին ատամ էօլ-
տիր Բէքլէ նէ՞ սէվինն տույապիլիրիւմ.

— Տօղլու տըր. ինսան՝ քէնտիսինէ խույ
իթմիշ օլտուղու պիր շէյտէն, սէվինն տույամաղ...

Կէչէն ագչամ միւսիւնին պիրի՝ սօդագ դա-
բուսընտա եալը՝ ըզճա տուրան պիր մատմազէլէ
եանաշըպ, շէօյլէ տէտի.

— Ազաննի, տուտուն վէ պապան պէնիւմ
իւթիւմտէ նէ՞ կէօրտիւլէր քի սէնի պանա վէր-
մէյօրլար.

— Ահ նաւըլ սէօյլէյիւմ Գօգօշնուլմ.

— Սէօյլէ՛, սէօյլէ՛.

— Իշթէ իւթիւնտէ պիր շէյ կէօրմէտիր.ք-
լէրի իշիւն վէրմէյօրլար ըմըշ...

Մատմազէլ Գուլիկ, քէնտի նշանըսընա.

— Միքէ, սէնտէն պիր ֆէտաքեարլըգ թա-
լէպ իտէճէիւմ, իճրա իտէճէ՞քմիսին.

— Նէ՞ ֆէտաքեարլըգ տըր իսթէտիզին.

— Էօմրիւն օլտուգճա արթըզըն րագը դա-
տէհինի աղլընա կէօթիւրմէյէճէքիւն.

— Բէք իսլահ, էօյլէ եաքարըմ.

— Սանա աղըր կէլէճէք պու վատընը իճրա
իթմէք, ամմա...

— Խալըր... չիւնքիւ պիր վագըթտան
պէրի գատէհի պիր թարաֆ էտիպ՝ սու բօթէրի-
սի իլէ իչէյօրսում...



Յանձնակատար ՆՇԱՆ ՍԱՐՐԱՅԵԱՆ կը ծանու-
ցանէ արգոյ հասարակութեան թէ Վառնայի, Շուսուի,
Ռուսնուքի, Թրնովայի, Բլէվնայի և Սօֆիայի միջև շարու-
ղակարար և կանոնաւոր երթևեկութիւն հաստատած է:
Կը խոստանայ գոհացուցիչ պայմաններով ճշդիւ գործադրել
իրեն ըլլալիք յանձնարարութիւնները: Իր կայարաններն
են, ի Վառնա Զարպհանէլեանի գրաստունը, ի Շուսու
կոստան Պօգաճեանի խանութը, ի Ռուսնուք Գալֆաեան
եղբարց ոսկերչատունը և ի Սօֆիա Մարտիրոս Յովհան-
նէսեանի սրճարանը:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.